

# Է Լ Ի Ս Օ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԶԵԶԷՆՆԵՐԻ ԿԵԱՆՑԻՑ

ՅԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ՄՈՉԽՈՒԲԱՐԻՉԵԼԻ (ԿԱԶԲԵԳ)

ՎՐԱՑԵՐՀՆԻՑ ԹԱՐԴՄ. ՄԿՐՏԻՉ ՆԱԼԱՍԱՐԴԵԱՆ

(Նարունակութիւն և վերջ<sup>1)</sup>)

## III

Այսպիսի մրմունջով և սուզով մթնեցրին և նոյն մրմունջ և  
սուզով դիմաւորեցին առաւօտեան արշալոյսին այն տանջւածները:  
Վաժիան, ծնւած օրից, իւր կեանքում շատ նեղութիւններ  
կրած՝ սովոր էր համբերութեան, բայց այն գիշերը նամի անասելի  
յուղած և վրդովւած սրտով էր սպասում արևի ծագելուն, որ  
կարողանար այն սարսափելի տեսարանից հեռանալ: Եւ ով կը լինէր  
այնպէս քարասիրտ, որ չը վշտակցէր այս ընդհանրական տագնա-  
պին, բացի այն զինւորներից, որ կարգւած էին զաղթողներին  
զսպած և անվրդով դրութեան մէջ պահելու համար:

Միմիայն նրանք էին զւարճանում, ծիծաղում և հանաքներ  
անում այս ժողովրդի անխօս նեղութեան վրա: Սովոր լինելով թա-

1) Տե՛ս «Մուլք» Ակ 3:

փառելուն, հեռացած սեփական ծննդավայրից, տանից տեղից, ընտանիքից, սիրոները կոշտացած գէպի օտարների տագնապը, չէին զբում և հասկանում թէ ինչի են իրանց զլովսը մահու տալիս այս պատւական և ամեն տեսակ լաւութիւնով օժտւած հայրենիքի զաւակները։ Սովոր լինելով քաշ գալուն և թափառելուն մի տեղից միւս տեղ, զուրկ սեփական հաճոյքից ու կամքից և ուժի ազգեցութեամբ ստրկացած, միշտ ուրիշների կամքի և ցանկութեան համեմատ ապրելու տովորածները կարծում էին թէ միւսներն էլ իրանց պէտք է լինէին. և անընդունակ էին երեւակացելու, որ ուրիշի ցանկութեան և հրամանի համեմատ ապրելը ամենքի համար տանելի չէ։

Արեւ զլուխը բարձրացրեց և մօտակայ անտառից լսւում էր բազմազան թռչունների դաշտայիկը։

Զարթեց բնութիւնը և բոլոր շնչաւորները գովաբանում էին նրա զօրութիւնը։ Նոյն իսկ ցողը, որ ծածկել էր զմրուխտագոյն դաշտը զարդարւած բազմուանդ ծաղիկներով, խաղում էր արևի ճառագլխների հետ և հազար տեսակ դոյն ընդունում։

Որքան էլ հրաշալի էին այս վայրերը, որքան էլ կարողանար այս անարատ կենսայից պատկերը զւարճացնել մարդուս սիրու, այնքան աւելի էր թախիծով լցնում այս զաղթակամներին և առաւել զգալի դարձնում նրանց անբախտութիւնը։

Զարթեցին, ով որ կարողացել էր քնել ելան տեղերից ամենքը և զանդաղ քայլերով դիմեցին իրանց սայլերին և եզն ու գոմէշին, որոնք այնտեղ և եթ մօտիկ արածում էին փոքր տղաների հսկողութեան տակ։

Նրանց մտածելու ընդունակութիւնը այն աստիճան թմրել, թուլացել էր, որ ամեն մի քայլափոխին մոռանում էին թէ ուր են զնում կամ ինչ էին կամենում անել, Հազար անգամ զլուխը շշմած որոնում էին սամին կամ սայլի մի այլ գործի այն ժամանակ, երբ այն գործին ձեռին ունէին բռնածն կամ թէ, բանի զնալիս, մի անյայտ ոյժ կանգնեցնում էր, ընկղմում խորը մտածման մէջ և թողնում այնպէս տիրած մինչև այն ժամանակ, երբ որ և է բարեսիրա դրացու կամ հրամայող զինորի ձայնը չէր հանի նրանց ինքնամոռացումից։

— Անզոր, հիմայ արդէն կը գնամ «Ձառւկ», ասեց Վաժիան  
լուսադէմին:

— Լաւ:

— Մինչև դու կը գաս այնտեղ, ես ամեն բան կը պատրաստեմ.  
խնդրում եմ:

— Լաւ:

— Արդեօք չը տեսնէի Ելիսօին... ասեց նա անհամարձակ:

— Ելիսօն հազիւ քնեց սալլում, մի՛ զարթեցնի, մեղք է:  
Վաժիան այլ ևս չը պատասխանեց, ծանր ով քաշեց և քայլերը  
ուղղեց դէպի Վլադիկաւկազ, որտեղ դիմեց ու զզակի կառավարչին:

Բաւական երկար սպասելուց յետոյ ևմեծ պարոն կառավարիչը  
հազիւ արժանացրեց իւր տեսութեանը և սենեակից դուրս գալուն  
պէս հարցրեց Վաժիային, որ զդակը հանել էր.

— Դուն ձվ ես:

— Ես մոխնցի իմ, ցաւդ առնեմ:

— Ի՞նչ է ասում, հարցրեց այն տեղ մօտիկ կանգնած թարգ-  
մանին: Սա էլ մոխնցու խօսքերը թարգմանեց:

— Ի՞նչ է ուզում... Անպատճառ գողութեան համար են ձեռ-  
բակալել այս աւազակին... Ա՛խ, Աստուած, Թրբ կը լինի, որ հե-  
ռացնենք մեզանից այս անհանգիստներին:

— Ես էլ հօ լեռնեցի եմ, գողութեան մասին ինձ չեն կարող  
բռնել... պատասխանեց հպարտարար Վաժիան, որ քիչ ու միչ հաս-  
կանում էր ոսւարէն: — Ես գործի համար եմ եկել:

— Ի՞նչ գործ ունես, ասսա շուտով. Ժամանակ չունեմ:

Մի ծերունի չեչէն էլ չի կամենում գաղթել և նրա փոխա-  
նակ խնդրում եմ, որ թողնէք նրան:

— Կորից այստեղից, գուեց կառավարիչը, լսելով Վաժիայի գա-  
լու պատճառը:

— Ի՞նչի էք ինձանից նեղանում. բացի մի աղջկանից ուրիշ  
տէր-տիրական չունի և...

— Եթէ ես կարողանայի, բոլորիդ էլ, հասկանմաւ ես, բոլորիդ  
էլ կը գաղթեցնէի, գլխիցս կը հեռացնէի. իսկ դու խնդրում ես,  
որ, որոնք նշանակւած են, նրանց էլ ազատ կացուցանեմ... Գնա,  
գնա, հեռացիր գլխիցս:

— Ցաւդ առնեմ, պարզն...

— Հեռացիր, ասում եմ քեզ... քեզ համար ժամանակ չունիմ:

— Հաստ թրի համար ունիս ժամանակ, պատասխանեց Վա-ժիան սրանեղաւած: — Գործը ես ունիմ և դու ինձ համար ժամա-նակ չունիս. Համար է վագակներ, գոչեց կառավարիչը, մատնացոյց անելով Վաժիայի վրա:

— Արան լաւ լաւ մտրակներ:

Վաժիան սպրանեց ամբողջովին և յետ ցատկեց:

— Զեղ մեղքի մէջ մի'ք խառնի ինձ, գոռաց նա կազակներին, ուսից հրացանը հանելով:

Կազակներն, որոնք Վաժիայի վրա վագեցին, յանկարծ յետ ընկրկեցան, այն ինչ լեղապատառ կառավարիչը գոռալով ներս ընկաւ իւր սենեակը: Կազակներն էլ, որ սկզբում այնպէս վախե-ցան Վաժիային մօտենալու, նոր նորից ուշաբերւելով ամաչած մնացին, որ միայն մի մարդուց այնպէս վախեցան:

— Բոնեցէք, բռնեցէք, գոչեցին նրանք յարձակւելով Վաժիայի վրա, որը հրացանի չախմախը բարձրացրած սպասում էր նրանց:

— Հեռացէք ինձանից, ի՞նչ ունէք հետս բաժանելու, գոռաց նա:

— Զինաթափւիր, անձնատուր եղիր, կանչում էին կազակները:

Վայ տա՞մ ձեր գլուխը, որ դուք կարողանաք կենդան զլիսով Վաժիային զինաթափ անել:

— Հրացաներ բերէք, հրացաներ, գոչեցին կազակները, և մի քանիսը վագեցին բերելու:

Որովհեաւ այս դէպքը պատշգամի վրա էր սպատահում և Վաժիան այնպէս էր շրջապատւած, որ սանդողքը կազակներն էին բռնել, գլխի լնկաւ որ այնտեղից ողջ չէր դուրս գնայ. այդ պատ-ճառով կամեցաւ նրանց իւր կեանքը թանկ նստացնել:

— Այ դոք, լածիրակներ... քսան հոգով էք մի մարդու վրա կտրճութիւն անում... Աբա եթէ ողամարդիկ էք, մէկ-մէկ եկէք և այն ժամանակ կը տեսնենք թէ որի մացը լաց կը լինի...

Վաժիան չէր ցանկանում մարդու արիւնի մէջ խառնել. բայց նրանք չէին հանդստացնում և նա էլ ոչարաստեց թանգ ծախել իւր ջանիլութիւնը:

Այս միջոցում յետ նայեց և տեսաւ որ փողոցին նայող պատուհանը բաց էր. մի ակնթարթում բարձրացաւ պատուհանի վրա և այնտեղից ցած թռաւ։ Վարը մի կազակ ձիեր էր մանածում, որոնց պատրաստել էին կառավարչի համար, որովհետեւ դաշտ պէտք է գնար չնչէններին դիտելու։

Վաժիան վրա ընկաւ կազակին, որին երեխացի պէս բարձրացնելով տափովը տւեց, խլեց ամենալաւ ձին, հեծաւ վրան մի ակնթարթում և կրնկեց դէպի անտառը։

Նփոթւած կազակները վրա թափւեցին պատուհանին, բայց ոչ մէկը նրանցից սիրո չարաւ վար ցատկելու։ Այս միջոցում հրացաններ բերին. բայց հազիւ նրանք կարողացան մի երկու անդամ արձակել, երբ Վաժիան արդէն անհետացաւ պատի եռուել։ Միւս կազակները շտապով վար իջնելով հեծան ձիերը և ընկան Վաժիացի յետելից, որ դուրս էր գնացել դաշտը և քշում էր դէպի անտառը։ Նրանք նաև խումբ-խումբ էին վազում և հրացան արձակում. քանի մի ձի առաջ ընկան, որոնցից երկու ձի առաջ դնացին. իսկ վերջը միայն մի ձին առաջ կտրեց ամենքին։

Հրացանաճութիւնը դադարեց, որովհետեւ յետամացները վախենում էին իրանց ընկերներին վիրաւորել. այն ինչ ամենից առաջ վազողը մոռացել էր հետը հրացան վերցնել։ Սակայն սրա արիւնարբու աչքերը ակնյացոնի ցոյց էին տալիս, որ, եթէ հասնելու լինէր Վաժիացին, չէր խնայիլ նրան իրբեւ մի չնչին արարածի։

Վաժիան քշելով իւր ձին, երբեմն-երբեմն դոռալով յետ էր նայում, օդում ճոճելով իւր գղակը. բայց հանգիստ ապրած և գերացած ձին շնչառառ լինելով, շուտով պակասեցրեց քայլերի արագութիւնը, այն ինչ միւննոյն արագութեամբ շարունակում էր կազակի ձին վազել, որը քրտնքի մէջ կորած՝ կուշտերը մէջքին էին կպել։

Կազակի ձին հետզհետէ մօտենում էր Վաժիացին, և այս վերջինը նկատեց, որ տնտառ մոտելուն չէր հասնիլ։ Կազակի յետամաց ընկերները, որոնք հարայ տալով խրախուսում էին իրանց ընկերին, շատ էին հեռու մնացել։

Վաժիան շրջեց թամբի վրա և առանց առջելու նայելու տեսաւ, որ կազակը, մերկացած թռուրը ձեռին, յոյս ունէր շուտով հաս-

Նել նրան։ Վաժիան հանեց ուսից հրացանը և շեշտեց կազակին, որը հէնց այն վայրկեանում յետ պառկեց իւր ձիու մէջքի վրա, երբ հրացանը ճայթեց և գնդակը միայն ծակեց նրա գդակի մի կողմբ։ Նա նորից ուղղւելով դոչեց Վաժիային։ Մոխեցին, այլ եւ ժամանակ չունենալով դարձեալ լցնելու, զցեց ուսի վրա հրացանը ինչպէս մի անպէսք զէնք և պատեանից հանեց թու ըլ...

Դարձեալ մի րոպէ և ահա ձիու վրա կանգնած և թուրը բարձրացրած կազակը հասաւ. Վաժիան հէնց այս վայրկեանում մի փոքր քովի դարձրեց իւր ձիուն, երբ կազակը թուրը վրա բերեց։ Կազակի ձին փոքր ինչ հեռացաւ Վաժիայի ձիուց, բայց այն միջոցում շողաց և Մոխեցու թուրը։

Այս ամենը այնպէս շուտ և արագ պասահեց, որ մարդ էր կարող աչք հասցնել։ Կազակի ձին առաջ անցաւ, Վաժիան պատրաստեց։ Երեխ երկուսն էլ մահից ազատւեցին... Քանի մի րոպէից յետոց կազակի ձին ծառս երաւ, երեխ հեծնողը խիստ ուժով ձղեց սանձը, կազակը օրօրւեց, ճկւեց դէպի յետ. մի րոպէ ևս՝ և ահա կախւեց նա ձիուց, վերջը ասպանդակից ոսր դուրս պրծնելով թաւալւեց գետնի վրա։ Վաժիան թրով նրա զլուխը միջից էր կիսել։

Զին, ազատւելով իրան չը հանգստացնող բեռից, կանգ առաւ և սկսեց ընդմիջաբար փոնչալով արօս պոկոսել։ Վաժիան, նրա հետ հաշիւը վերջացնելով, կուացաւ դէպի միւս ձիու սանձը, որից բանելով րոպէարար թռաւ իւր ձիուց նրա վրա։

Քանի մի հրացանաձգութեան ձայն լսելով, որ կազակները ուղղում էին դէպի նա, Վաժիան քշեց իւր ձին դէպի անսառը, ուր անհետացաւ. կազակները նրան բաւական որոնելուց յետոց վերադան դատարկաձեռն և այս դէպի պատճառով կառավարին բացականչեց։

— Ձեզ ասի, որ սրանք ամենն էլ Աստծու կրակ ու պատիժ են... Որքան և ինչ բանով էլ կարելի է, անհրաժեշտ է դրանց այնտեղից շուտով դաղթեցնել։

— Ճշմարիտն էք հրամացում, ճշմարիտ. զլուխ տալով համաձայնութիւն էին յացնում, կամ թէ ձևացնում էին այնպէս այնտեղ ներկայ գտնուղները, որոնք չեւնեներին գաղթեցնելով այնքան ոգևորւել էին, որ մատղրւում էին նոյնն անել և վրացիներին։

## IV

**Չեւէնները** մօտեցան Վլադիկաւկազին։ Միմեանց յետեփու ճռճռացող սալլերը առաջանում էին դանդաղաբար և մարդու սիրու էին մաշում։

Սալլերին հետեւում էին փոքր տղաներ ոտաբորիկ, որոնք կիզիչ արևի ազդեցութիւնից սևացել, ոտերը աւազի մէջ խառն խիճերից հաղար տեղից ճաքճաքել և այն ճեղքերում թռող նստել մեռել էր մէջը։

Կասկած չը կայ, անտանելի ցաւ էր զգում նրանց մորթը. որովհետեւ շարունակ կաղում էին, բարձրացնում էին ոտը. եթէ չէին էլ լալիս, գոնէ տնկում էին դառնապէս և սարսափելի կերպով ժամանակում դէմքերը։ Նրանք անցան ջառուգիւ մօտով, որտեղ ժողովուրդը դիմաւորելով կանգնեց սրտառոչոր և ցաւակցաբար նայելով նրանց, այն հաւատացեալ չեշններին, ովք գիտէ որի պատճառով. բայց ի՞նչ կար խեղճ ժողովրդի ձեռին, ի՞նչով էր կարող նրանց դառն վիշտար թեթեւացնել։ Ելիսօն տանջւում էր այս տեսարանին նայելով և Վաժիային սպասելով, որ տակաւին ոչ մի տեղ չէր երևում. կարծես թէ մոխեցին մոռացել էր իւր սիրուհուն, որի համար երէկ քիչ մնաց իւր անձը զոհէր։

Անգորն էլ, չը գիտենալով նրա զլիսին եկածը, զարմանում էր, որ մոխեցին չը հանդիպեց նրանց քաղաքի ծայրում և չը տարաւ մեծաւորի մօտ, սկզբում արած պայմանադրութեան համեմատ։

Աղջիկն ու հայրը մեռածների նման էին, և խուսափում էին միմեանց նայելուց. վախենալով չը լինի թէ անտեղի հարցմունքով, հակառակ իրանց ցանկութեան, աւելի վատ հետևանքի չը հասնէին։ Եւ ի՞նչ հարկ կար այս մասին խօսելու, երբ արդէն իրողութիւնը այնպէս աշկարայ պարզ էր։

Վաժիան նրանց պէտք է հանդիպէր ջառուգիւ ծայրում. բայց ահա նրանք անցան և միւս ծայր, և տակաւին մոխեցին ոչ մի տեղ չէր երևում... Հասան նաև այն կէտին, որտեղ պէտքէ զիշերէին, և սալլերը կանդ առան, որոնցից դարձեալ շըջան կազմելով՝ զինւորներին և կազակներին հրամացեցին շըջապատել և հսկել նրանց վրա։

Արևը դեռ ևս չէր մայր մտել, երբ այնտեղերի կառավարիչը

շնորհ բերեց իւր թարգմաններով և կազակներով, դուր, կանչեց քանի մի հոգի նրանցից և ասեց.

— Դուք ինքներդ ցանկացաք կամովին Տաճկատան գաղթել, և մենք էլ թոյլ տւինք ձեզ Հիմաց ես լսում եմ, որ ձեզանից քանի մի հոգի ցանկութիւն են յայտնել դարձեալ այստեղ մնալու... Յայտնում եմ ձեզ, որ ովքեր արդէն նշանակւած են գաղթողների ցուցակում, անկարելի է բոլորովին նրանց այստեղ մնալը: Հետևապէս, թող ձեզանից ոչ ոք համարձակւի փախչել. այս պատճառով ձեզ վրա հնկողների թիւը կրկնապատկեցի և... լաւ իմացէք, ով որ այս հրամանը քանդել ուզի, նրան անողորմաբար կը սպանեն... Այսպէս է նրանց հրամայւած:

Այս խօսքերը ասելուց յետոյ շրջեց իւր եօրշաչ ձին և հպարտաբար քշեց դէպի Վլաղիկաւկազ:

Ժողովուրդը քանի մի ժամանակ մնաց այնպէս անխօս, սառած և յետոյ կամաց կամաց ցրեց զանազան կողմեր:

Եւ ի՞նչ պէտք է ասէին... Ո՞րին կարելի էր բան հասկացնել:

Ամենքն սկսեցին իրանց տեղերը պատրաստել:

Գիշերւայ ժամի իննը կը լինէր երբ Տաճկատան գաղթողների բինէն դարձեալ նախկին պատկերն էր ներկայացնում: Դէս ու դէն կրակներ վառւած և նրանց մէջ տեղում ուրւականների նման այց և կին մարդիկ անդամալուծի պէս էին շարժւում: Զանազանութիւնը միայն նրանում էր կայանում, որ ժողովուրդը աւելի էր նեղացած... ճիանուրի ձայնը էլ չէր լսում...

Զէր վերջացել միայն անախորժ մրմունջը, անխօս տնքոյը, վշտացած սրտի անձանն թախսիծն ու սուզը... Արանք դիտում էին իրանց դաշտերը, իրանց սարերը, որոնք զիշերացին մժութեան մէջ պատկերանում էին երկնակամարի վրա: Այստեղից դրկում էին իրանց վերջին վշտալից բարեները. իսկ մնացածը արտացատում էր դարձեալ սուզով և լացով:

Ցանկարծ սարսափելի թող բարձրացաւ մի տեղից այնպէս, որ կարծես թէ քամին մի աւագուտ տեղ փշեց: Յայտնեց ծխի նման մի փոքր մշուշ և շուտով անհետացաւ:

Յայտնեց մի այլ տեղ և նորից հանգաւ... Արանից յետոյ քանի մի տեղում դարձեալ միաժամանակ մշուշներ երևացին, որոնք կար-

ծես թէ հողիցն էին դուրս գալիս, գնալով-գնալով աւելի մեծանում և ուռչում էին: Օդը տակն ու վրա եղաւ, մթագնեց և սպառի նշան մասյլ կերպարանք ստացաւ:

Փոթորիկը փչում էր սաստկաբար և միանում ժողովուրդի հեծեծանքին՝ միակ զաւակը կորցրած անմխիթար ծնողի նման: Քանի մի վայրկեանից յետոյ երկինքը կապարագոյն կարեց, յայտնի երեսում էր, որ եղանակը վատանալու վրա էր, կարծես թէ նոյն խակ բնութիւնն էլ սգածել էր ժողովուրդի աննկարագրելի տան-ջանքից և այնտեղի երկինքը չէր կամենում իւր զաւակներից առանց արտասուրքի հրաժեշտ տալ:

Դադարեց քամին և օդը տաքացաւ: Ամեն բան անդորր կերպարանք առաւ: Օդը ծանրացաւ, որից և շնչառութիւնը դժւար էր լինում... Ընկաւ: Մի կաթիլ, հետևեց երկրորդը, գոռգուաց երկինքը յանկարծ և անձրեւը մանր կաթիլներով բայց անլնդհատ գալիս էր: Մի ակնթարթում ամբողջ կանաչ դաշտը ջրով ծածկւեց, որի տակից կարծ արօտները զլուխը դուրս հանելով շարժւում էին մեղմօրէն:

Զուրը գրանում էր զար ու փոսերում, որովհետեւ երկիրը կը տանալով էլ չէր կարողանում աւելորդ ներս ծծել: Նորից փչում էր քամին ընդմիջաբար և մռնչելով սառեցնում ամեն բան, որի հետ միանում էին երբեմնակի գուգուոցը և փայլատակումն մռնչելով:

Երեխաները ահից և ցրտից լալիս էին: Մննդաբեր մայրերը սգալով անէծք էին կարդում իրանց այն դրութեանը հացնողին և այլպէս անիծելով, հոգիներն աւանդում:

Ցղամարդիք դէմքերը տիրամած, ձեռը խանչալի վրա դրած կանգնել էին անմռունջ և դիտում էին իրանց մե օրը, կարծեսարդարադասութեան էին սպասում, բայց ումնից:

Մի տեղ պատկել էր մի հիւանդոս պառաւ և սարսափելի դողացնում ցրտից: Պատառուուն յնցոտիները, որոնց բացւածքներից երեսում էր նրա կարմիր կապտած միսը, հաստատում էին, որ անտէր և աղքատ էր նա: Ողորմելին ծումկի (ցեխոստ ջուր) մէջ տարածւած մաքառում էր մահի դէմ և այլպէս հոգեվարք կացութեան մէջ էլ հանգիստ չէր դոնում: Խակ անձրեւը անդադար հոսում էր վրայից:

Անզորը նկատելով այս՝ ծածկեց նրան իւր մորթու վերարկուով և երեխաները վրա թափուելով նստեցին նրա շուրջը դողդողալով պահապան հրեշտակների նման, որոնք ազօթք էին անում կարծես նրա հոգու համար... Զը քաշեց քանի մի բռպէ, պառաւը նստեց իւր տեղը, խորդաց և հոգին աւանդեց: Միթէ Ամենաբարձրեալը չեր լսի, չեր ալցելի սրանց... Սաստիկ մթնեց, կրակները հանգան անձրեից բոլորովին, միայն լոռութիւնը խանգարւում էր աղմկւածօդի դուգուոցից և Զէշէնների անընդհատ անքոցից և Արարչի անունը յաճախակի ցիշելուց:

Կը լինէր արգէն գիշերւայ տասերորդ ժամը, երբ ճանփորդների կայանի կողմը, խոտերում պառկած, մի մարդ կամաց և զգուշաբար փորսողում էր: Նա ամեն մի բռպէ բարձրացնում էր զլուխը խոտերից և լսու դիտում իւր շուրջը, և երբ հաստատ համոզուում էր, որ ինքը աննկատելի էր, իսկոյն և եթ տարածւելով գետնի վրա նորից շարունակում էր փորսողել: Երբ անծանօթը հասաւ այն կետին, որտեղ պահապանները ծիր էին քաշել, նա նորից զլուխը բարձրացրեց և գիշերացին մութին սովոր աչքերով շուտով որոշեց, որ խիստ էր մօտեցել մի զինւորին և որ այս պահանից առանց նկատելու գժար էր յետ դառնալ:

Եւ իրօք, զինւորը որ անձրեւից կուչ եկած և աչքերը խփած սպասում էր իւր փոխւելուն՝ շարժւեց յանկարծ, բացեց աչքերը և յետ ու յետ գնաց: Երեւում էր, որ իրան մօտեցած մարդուն նկատեց և բերանը բանալով ուզեց աղաղակել: բայց Վաժիան արագութեամբ խրեց խանչալը նրա կոկորդը և ձայնը կտրեցրեց. սուսը այնտեղ և եթ ընկաւ և սկսեց թռպրտալ:

Հանեց կամաց Վաժիան խանչալը, մաքրեց թաց արօտի վրա քսելով և կրկին փորսողելով դիմեց զէպի Զէշէնների կողմը:

Երբ սայլերին մօտեցաւ, — տեղից կանգնելով աներկիւդ մոտաւ Զէշէնների մօտ, այնտեղ հարցնեով շուտ գտաւ. Անզորի սայլը, որում Ելիսօն պատսպարել էր:

Նրա հայրը գլխաբաց և մազերը գզգզւած կարծես չեր զգում եղանակի խստութիւնը և գլխովին ընկղմել էր մօտածմունքի և վշտի մշջ:

Այժմի երբ իւր աղջկայ և Վաժիայի այս կերպ անձնւէր սիրա-

հարութիւնը հասկացաւ, երբ համոզեց, որ նրանց միմեանցից անցատելը մահի հաւասար է, հօգով սրտով ցանկացաւ մնալ այնտեղ և իւր մտադրութիւնը իրականացնելու համար էլ չէր խնալում ինքն իրան:

Է՛յ, էջ. կանչեց ծերունին, մօտեցող մարդուն նկատելով: — Ո՞վ եւս — Անդրի, ցած ձայնով և կամաց հարցեց մօտեցողը:

— Վաժիա. գոչեց ուրախացած ծերունին և դիմաւորեց նրան:

— Այլ ևս ուշանալ չի կարելի, պէտք է փախչենք:

— Հապա վարի պահապանները... մւր կարող ենք նրանցից փախչել. ուղղակի սկսեց Զէլինը, որովհետեւ կեանքը սովորեցրեց նրան, որ իդուր հարցեր անելուց ոչ մի օգուտ չէր սպասւիլ:

— Այստեղ և եթ, մի դադանի տեղում ձիեր ունեմ. միայն շտապել պէտք է:

— Եթէ Անդրը միայնակ լինէր, այն հանդամանքում առանց երկար մոտածելու կը հետուէր Վաժիալին. բայց այժմ հետն ունէր իւր վերջին յոյս ու ապաւէնը, որին վտ-նգելուց մահն աւելի կը նախադասէր իւր համար:

— Աղջկանս ինչպէս տանենք, հապա. վայ թէ...

— Ես պատրաստ եմ, ընդմիջեց Ելիսօն, սայլից վայր իշնելով: — Ես ամեն բան լսեցի, գնանք:

— Ելիսօն. կոչեց Վաժիան յափշտակւած և ամուր սեղմեց իւր կրծքին:

Անդրը արտասւալից աչքերով նայում էր այս պատկերին և երկնչում էր խօսք ասելուց, որով կարող էր նրանց բախտաւորութիւնը խորուակել:

— Աստւած է միացնում, մարդ չի բաժանիլ ճեզ, վերջապէս ասեց զգուշաբար ծերունին, որի համար ամեն մի բոլէ թանգ արժէր: — Եթէ այդպէս է, ուրեմն շտապեցէք: Այս խօսքերը դուրս հանեցին երկու սիրահարներին ինքնամուացութիւնից և մոտարերեցին եղելութեան ճշգրիտ դառնութիւնը: Ճշմարիտ ես ասում, ուշանալ պէտք չէ, պատասխանեց մոխեցին, թոթափիեց ամբողջովին և գդակը հանելով աւելացրեց.

— Զորի սուրբեր և հրեշտակներ, դուք օգնեցէք, դուք աջողեցէք մեզ:

Նրանք գնացին Վամիայի առաջնորդութեամբ այն ճանփով, որով ջահել մոխեցին եկել էր, և սալերից հեռանալուն պէս Վամիան շշնջեց Անզորի ականջում ցած ձայնով:

Այստեղից փորսողելով պէտք է անցնենք:

Երկու տղամարդիք տեղն ու տեղը գետնատարած պառկեցին, մէջ տեղում առան աղջկան և այնպէս փորսողելով անցան պահապանների ծրից:

Թէրէքի ափի մօտ նրանք գտան երեք ձի, որոնց վրա հեծնելով կրնկեցին դէպի լեռները:

## V

Նրանք քշում էին ձիերին և աշխատում էին, որքան կարելի է, շուտով անցնել Լարսից և Դարիալից, աւելի վտանգաւոր տեղերից, որտեղ լեռները պատառուել և կարծիս դիտմամբ վայր են սրւել, որ նեղն ընկած մարդուն խոչ ու խութ ներկայանալով՝ զբկեն նրան ամեն միջոցից ազատօրէն շրջադայելու:

Այն ժամանակներում այս տեղերով ճանփորդելով նրանով աւելի էր զժւարանում, որ ամբողջ ճանփան, աւելի պարզն ասենք, որ զիշերներով ուռւ պահապաններ էին նշանակում խաչմերուկ կերպով, և թուղարսում էր ամեն տեսակ ապօրինութիւններ անելու, որովհետեւ նրանց արարքը զիշերով և անվկայ էր պատահում: ուրեմն օտար աչք չէր տեսնում, չէր որոշում նրանց վարմունքը և. ոչ ոք էլ չէր դատապարտուիլ:

Կը լինէր մօտաւորապէս զիշերւայ տասներկու ժամը, երբ Վամիան իւր ուղեկիցներով մօտեցաւ Լարսի վտանգաւոր տեղը. Վամիան որ միշտ ընդառաջում էր, կանգնեցրեց ձիուն և արագաբար վայր թռաւ: Անզորն և Էլիսօն էլ կանգնեցրին իրանց ձիերին:

— Ի՞նչ կայ, հարցրեց ծերունին:

— Վայր իջէք ձիերից, կարճ կարեց մոխեցին և օգնեց Էլիսօին ձիուց իջնելու:

Անզորը բռնելով ձիերի սանձերը՝ այլ ևս չը կրկնեց իւր հարցմունքը, որովհետեւ մոխեցու զգուշաւոր խօսակցութիւնը, կարճ խօսքերը և հրամայական ձեւը հաստատում էին, որ իրանք վտան-

գալից կացութեան մէջ էին և աւելորդ հարցմոնքները աւելորդ ժամանակ կորցնել էին նշանակում:

Վաժիան քակեց թամբից իւր եափնջին, հանեց դանակը և սկսեց փոքր կտորների կտրատել: Յետոյ հանեց փոքր խուրջինից (հարգից) բարակ թռկեր և եափնջու կտորներով ձիերի սմբակները փաթաթելով ամուր կապեց: Անզորը, իրրև դաշտում մնւած և մեծացած, չէր հասկանում այս զգուշութիւնը և զարմանքով էր դիտում մոխեցու վարմունքը:

— Խ՞ոչ ես անում: Հը համբերեց ծերունու սիրու և հարցրեց մոխեցուն:

— Այստեղ պահապաններ կան և ճանփան էլ քարոտ է: Այս խօսքերով Անզորը հասկացաւ, որ ձիերի սմբակները եափնջով էին փաթաթւած և աղմուկ հանելու չէին և, իբրև նախկին պատերազմող, զօրքերի առաջնորդ, չափազանց հաւանեց այս հնարագիտութիւնը:

— Դուն հնարագէտ ես եղել: Ափսոս, որ Շամիլը բռնեց, նրա մօտ շուտով կը հոշակէր անունդ:

— Հեծէք, կոչեց Վաժիան և մի վայրկեանից յետոյ յառաջ ընթացան նոյն կարգով:

Եւ ուղիղ մինչև այժմ ձիերի սմբակները այնպիսի աղմուկ էին հանում իմով և աւազով ծածկւած ճանփի վրա, որ մեռածներն անզամ կ'արթնանալին, այն ինչ հիմայ ոչ մի ճայն չէր լսւում նրանց քայլւածքից:

Վաժիան համոզւած էր, որ կը խարէր հակող պահապաններին նա մանաւանդ այն պատճառով, որ եղանակը չէր պարզւում և թանձր մառախուղը աւելի էլ սաստկացնում էր գիշերային մժութիւնը, այնպէս որ մարդ չէր կարող իւր աչքին մօտեցրած մատը նկատել:

Մինչև այժմ արագ ընթացքը մոխեցին փոխարկեց յամը գնացքին. շարունակ զգուշ, ականջները սրած, կարծես ամբողջովին լսողութիւն էր դարձել, որպէս զի ոչ մի շուկ չը թողնի առանց լսելու: Վաժիան քանի մի անգամ անորոշ ձայներ լսեց, շատ անգամ ձիուն կանգնեցրեց և նրա վզի երկարութեամբ պառկելով երկար ժամանակ ականջ էր դնում: բայց համոզւելով, որ երկիւղալի

բան չը կար, նորից շարունակում էր իւր ճանփան: Նրանք մօտեցան այն թռումբին, որի մօտ հոսող առւակի վրա ջրաղացի չարի էր պտղուում; ձին յանկարծ փանչաց, խրտնեց և յետ քաշւեց: Վաժիան ջգրեց ձիու վրա և կամացուկ մորակելով քշեց դէպի թռումբը. բայց ձին մերձենալուն պէս գարձեալ յետ ցատկեց:

— Անտէ՛ր, ի՞նչ տեսար, հազիւ արտասանեց այս խօսքերը, երբ լեզուների նման ինչ որ ցոլացին և հրացանների ճայթիւններ լուեցին:

— Օ՛խ, շներ, շներ, որոտաց նա և ձիուն քշեց դէպի այն կողմը, որտեղ փայլակը լուսաւորեց տասնեակ կամ աւելի բազմաթիւ հրացանակիր ուներ: Մի բոպէում մերկացրեց իւր թռուրը մոխեցին և առաջին յարձակման միջոցում մէկին այնպէս զարկեց, որ մէկ ուսից մինչև միւսը վայր բերեց թրի հարւածով. բայց իսկոյն և եթ զգաց պաղ ծայրը, որ իւր սրտի միջով անցաւ մինչ կոնակը: Նա տրորւեց և գետին զլորւեց:

— Անսատւամծներ, անօրէններ, անհաւամտներ... էլի... էլիսօ, և էլ չը կարողացաւ խօսքը վերջացնել:

Անզորը և նրա աղջիկը փոքր ինչ յետ էին մնացել և գնդակներով բոլորովին ծակծակւել. բայց ծերունին դարձեալ յաջողել էր միանգամայն ևս զարկ տալ իւր աղջկայ կրծքին և այնպէս հոգին աւանդել:

Այս դէպքից յետոյ, երրորդ օրը, նոյն իսկ այն տեղով, որտեղ սպանւածները տակաւին ճանփի ափին թափւած էին և ոչ ոք չէր մտածում նրանց մարմնները հողին աւանդել, անցան Անզորի ընկերները. նրանք առաջւանից աւելի էին նեղացել... Դարձեալ լաւում էր նոյն լացը, դարձեալ նոյն սիրտ տոչորող սուդի ձայնը, դարձեալ միւնոյն ողբն ու կոծը, որը դուրս էր թռուում սրտի խորքից և տարածւում օդում...

Այս թշւառները ճանապարհ ընկան դէպի Տաճկաստան. բայց շատե՞րը արդեօք հասան նշանակւած տեղ...